
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ԱՏՈՐՈԳՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՀԵՐՄԻՆԵ ԱԲՐՈՅԱՆ

Հանդես գալով որոշակի խոսքային իրադրությունում և կատարելով իր հաղորդակցական դերը՝ նախադասությունը ենթարկվում է առկայական տրոհման:

Նախադասությունը ենթարկել առկայական տրոհման նշանակում է այն տրոհել ենթահիմքի և վերաբերյալի՝ դրա տարրերը բաժանելով ըստ տեղեկության հաղորդման կարևորության:

Առկայական տրոհման գլխավոր միջոցներն են հնչերանգն ու շարադասությունը:

Խոսքում շարադասությունն ու հնչերանգը գործում են միաժամանակ. լեզվաբանության մեջ բազմիցս ապացուցվել է, որ շարադասությունը որոշ դեպքերում հուշում է, թե հնչերանգային ինչ ձև կարող է ունենալ տվյալ ասույթը և ընդհակառակը, ասույթի հնչերանգային ձևն իր խոսքային իրացման համար պահանջում է անհրաժեշտ շարադասություն: Բացի այս երկու գլխավոր միջոցներից, առկայական տրոհման բացահայտմանը մասնակցում են նաև այլ միջոցներ:

Ենթակա+ստորոգյալ հաջորդականությունը կոչվում է ուղիղ շարադասություն, իսկ **ստորոգյալ+ենթակա** հաջորդականությունը՝ շրջուն, որը կախված չէ առկայական տրոհման բաղադրիչների շարադասությունից:

Առկայական տրոհման տեսության հիմնադիր Վ. Մատեզիուսը, ըստ ասույթի ենթահիմքի և վերաբերյալի հաջորդականության, տարբերում է շարադասության երկու տեսակ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Շարադասությունն օբյեկտիվ է, երբ խոսողը մտքերը շարադրում է այնպես, որ հայտնիից գնում է դեպի անհայտը: Ենթահիմքը դրվում է ասույթի սկզբում, իսկ վերաբերյալը՝ վերջում: «Բայց գոյություն ունի նաև հակառակ շարադասություն,-գրում է Մատեզիուսը.- սկզբում դրվում է ասույթի միջուկը,

ապա նրան հաջորդում է ելակետը: Այս շարադասությունը սուբյեկտիվ է, որի դեպքում խոսողը ուշադրություն չի դարձնում մտքերի բնական՝ հայտնիից դեպի անհայտը, ընթացքին, կամ նա այնքան է տարված ասույթի միջուկով, որ հենց այն է դնում առաջին տեղում: Այդ պատճառով նման հաջորդականությունը ասույթի միջուկին տալիս է հատուկ նշանակություն»¹:

Օբյեկտիվ շարադասության դեպքում հաղորդակցական գծապատկերն է՝ ***T+R***, իսկ սուբյեկտիվ շարադասության դեպքում՝ ***R+T***:

Սույն հոդվածում ենթակայի ու ստորոգյալի շարադասությունը դիտարկելու ենք ուղիղ և շրջուն և օբյեկտիվ ու սուբյեկտիվ շարադասությամբ՝ փորձելով պարզել, թե **ենթական+ստորոգյալ** քերականական կառուցվածքը որքան է համապատասխանում **ենթահիմք+վերաբերյալ** կառուցվածքին: Կամ քերականական շարադասության այս կամ այն դիրքը որքան է նպաստում ենթակային կամ ստորոգյալի՝ ենթահիմքի կամ ստորոգյալի դերով հանդես գալուն:

T+R* շարադասությունը՝ ենթակա+ստորոգյալ հաջորդականությամբ:** Ենթակա+ստորոգյալ կառույցներում շարադասությունը օբյեկտիվ է, եթե հայտնի է գործողություն կատարողը, և խոսողի նպատակն է պարզել, թե ինչ գործողություն է նա կատարել: Այս պարագայում ենթական մտքի ելակետն է՝ ենթահիմքը, իսկ ստորոգյալը՝ հաղորդվող նորությունը՝ վերաբերյալ: Քերականական տրոհումը համապատասխանում է առկայական տրոհմանը: Հաղորդակցական գծապատկերն է՝ ***T+R:

Նման ասույթներում ստորոգյալը ասույթի վերաբերյալն է. «ստորոգյալը ամենից հարմարն է մտքի շեշտը կրողի դերի համար»² և «սովորական շարադասություն ունեցող պատմողական նախադասության տրամաբանական շեշտը դրվում է ստորոգյալի վրա»³:

Օրինակ՝ Փիլիկ աղբար/ հարբա՛ծ էր (ՀՀԼՍ, 156)⁴: Լեռները /մոտեցէ՛ր էին (ՀՀԼՍ, 80): Եպրաքսե հանըմ /կ'ուլար (ՍՊ, 38): Այի /սեղմուեցաւ (ՍՊ, 274):

¹ **Матезиус В.** О так называемом актуальном членении предложения, ПЛК, М., 1967, стр. 244-245.

² **Քոսյան Վ.**, Ակտուալ անդամատումը և շարադասությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1990, էջ 22: Qosyan V., Aktual andamatuny ev sharadasutyuny jamanakacic hajere-num, Yerevan, 1990, ej 22:

³ **Աբրահամյան Ս.**, Հայոց լեզու. շարահյուսություն, Երևան, 2004, էջ 16: Abrahamyan S., Hayoc lezu. Sharahjusutyun, Yerevan, 2004, ej 16:

⁴ Մեջբերումներին կից փակագծերի մեջ նշում ենք բնագրի համառոտագրությունը և համապատասխան էջը. ցանկը տալիս ենք վերջում:

Ասույթի վերաբերյալը ստորոգյալն է, եթե այն արտահայտված է ժխտական խոնարհմամբ կամ բաղադրյալ է, քանի որ «անկախ իր դիրքից՝ բաղադրյալ ստորոգյալը ամենից հարմարն է տրամաբանական շեշտ կրելու»⁵:

Օրինակ՝ *Չալոն /սպասող շուներէն չէր (ՀՀԼՍ, 34): Մնուշին կասկածը /ճիշտ էր(ՀՀԼՍ,46): Կինը /չկա՛ր (ՇՇՆԱԵ,52): Նուռ մամը / կարդացող չէ (ՀՄԵ, 29):*

Տրամաբանական շեշտ կրող ստորոգյալի իմաստը երբեմն ավելի է ընդգծվում սաստկական բառերի օգնությամբ:

Օրինակ՝ *Աղը Կիզել աղան /չէր նկատեր **անգամ**(ՀՄԵ,43): Զինք հեփաքըրորը / պարմությունն **իսկ** էր(ՄՊ,250): Անդունդը /պիտի պատուեր **կարծես** (ՀՕԵ,62):*

Արևմտահայերենում, բացի վերաբերականներից, վերաբերյալը կարող են ընդգծել նաև այլ խոսքի մասերի պատկանող բառեր, ինչպիսիք են դերանունները, *մը* անորոշ հոդը, մակբայներ, շաղկապներ և այլն:

Օրինակ՝ *Ակոսներուն փակ բառերը/ մոլորութ **մը** եղան(ՄՊ, 264): Բացառությունը/ **խիստ** քիչ է այս մասին(ՀՀԼՍ,12): Ձկնորսը / **ինքը**՝ Մաթոյ Կարոն էր (ՀՀԼՍ,530):*

Երբեմն ստորոգյալը կրկնվում է, որի միջոցով հաղորդվում է հուզականություն, և վերաբերյալը դառնում է արտահայտից:

Օրինակ՝ *Մեկնած օրը մայրը / **լացաւ** դառնօրէն, ձեռքերը ծունկերուն զարնելով **լացաւ** (ՄՊ, 315): Բայց անոր շրթունքները/ **ուրիշ, ուրիշ էին** (ՀՕԵ,92): Տիգրան **պեփք էր քալեր: Աւելի շուրջ քալեր(ՄՊ,230):** Տիգրանի սրտին մէջ լուրը **կը մեծնար** գլորուող ձիւնագունդի պէս: **Կը մեծնար(ՄՊ,234):***

Չեզոք ոճում սովորաբար խոսողը մտքերն այնպես է դասավորում, որ հայտնիից գնում է դեպի անհայտը: Այս պարագայում հայերենին բնորոշ է ենթակայի զեղչումը, քանի որ այն արդեն հայտնի է համատեքստից: Սա ևս ապացուցում է, որ հայերենում վերաբերյալի դերով հանդես գալը առավել բնորոշ է ստորոգյալին:

Օրինակ՝ *Տոբթոռն Վահանեան սովորական բժիշկ մը չէ... Գիտութեան ֆոռմիլներուն, կամ իր արհեստին մեքենական կիրառումին մէջ փափակցած ու չքացած միտք մը չէ (ԳԶԵ,82):*

Հայերենում ենթական մեծամասամբ արտահայտվում է դերանուններով՝ առաջին տեղը զիջելով միայն գոյականներին: Դերանունները՝ հատկապես

⁵ Քոսյան Վ., նշվ. աշխ., էջ 29:

անծնական, խոսքում հաճախ ընդհանուր են լինում ոչ միայն տեքստի մեծ մասի, այլև ողջ տեքստի համար, որի շնորհիվ էլ դառնում են հաղորդակցորեն ավելի քիչ նշանակալից և նախադասության մեջ գրավում հնչերանգայնորեն թույլ դիրք: Ուստի դրանք բնորոշ է ենթահիմք դառնալը: Օրինակ՝ *Բայց չէ՛, Նուռ մամը կարդացող չէ: Ան հեքիաթասաց է (ՀՄԵ,29): Ես որոշեցի Նարոն փնտրել ու գտնել: Բայց ան չէր հանդիպեր իմ աչքերուս (ՀՄԵ,94):*

Իբրև ենթահիմք կարող են հանդես գալ ոչ միայն դերանունով, այլև գոյականով, փոխանուն ածականով, փոխանուն թվականով, դերբայով, դերբայական դարձվածով արտահայտված ենթակաները:

Օրինակ՝ *Իր ծանօթները /եկած են(ՄՊ,510): Հեքիաթին ձեռ ու գոյն տուողը / նոյնպես Մաթոյ Կարոն էր(ՄՊ,534): Գրածը /աղբիւրի միջադէպի պէս ձախորդ բան մըն էր (ՄՊ,559):*

R+T շարադասություն՝ ենթակա + ստորոգյալ հաջորդականությամբ:

Ենթակա + ստորոգյալ կառույցներում նախադասության ենթական կարող է լինել ասույթի վերաբերյալ, իսկ ստորոգյալը՝ ենթահիմքը: Այս դեպքում անհայտ է գործողություն կատարողը: Շարադասությունը սուբյեկտիվ է. խոսողը մտքերը դասավորում է այնպես, որ անհայտից գնում է դեպի հայտնին: Քերականական տրոհումը չի համընկնում առկայական տրոհմանը: Հաղորդակցական գծապատկերն է՝ ***R+T***:

Ուղիղ շարադասությամբ ենթական մտքի նորն է՝ վերաբերյալ, եթե նրա վրա է ընկած տրամաբանական շեշտը:

Օրինակ՝ *Ոչ ո՛ք / բացառությւն կը կազմէ(ՄՊ,26): Ա՛յդ / Վահրամին ու Մարանին սէրն էր(ՀՀԼՍ, 572): Եւ ե՛ս / տեղի տուի(ՇՇՆԱԵ,83): Գիտցո՛ղը գիտէր(ԴՄԳ,250):*

Վերևում նշեցինք, որ դերանուններին առավել բնորոշ է ենթահիմքի դերով հանդես գալը, սակայն դերանուններն իրենք կարող են ընկնել տրամաբանական շեշտի տակ և դառնալ վերաբերյալ: Դրանք հաճախ գործածվում են ***ինքս, ինքդ, ինքը, ինքզինքս, ինքզինքդ, ինքզինք, բոլոր, իսկ, անձամբ, անգամ, ալ, ևս, սաստիկ, չափազանց*** և այլ բառերի հետ, որոնք իրենց հերթին շեշտում, ընդգծում են վերաբերյալը:

Օրինակ՝ *Անկկայ ինքզինքը/ հաւասար կը զգար ուրիշներուն (ՄՊ,253): Ես ինքս ալ /բախտաւոր կեանք մը չունեցայ (ՀՀԼՍ,625): Անոնք բոլորն ալ /քալած էին իր սրտի ճամփէն (ՀՀԼՍ,460): Դուն ալ /կ'ըսես ուսումնական տղայ ունիմ (ՀՀԼՍ,540): Բայց այդ առիթով ինքն ա՛լ /կուգէր տեսնել Մարանը (ՀՀԼՍ,558): Անոր ապեն՝ դուն ալ /ասանկ էիր (ՀՄԵ,39):*

Վերը թվարկված սաստկական բառերը գործածվում են ոչ միայն դերանվան, այլև գոյականով արտահայտված ենթակայի հետ, որն ասույթի վերաբերյալն է:

Օրինակ՝ *Էլեոնորի համար Ճիմի հիանդ գոյութիւնն ի՛սկ ինքնին* / աշխարհ մըն էր (<<ԼՄ,113): Ու կատակները, ակնարկութիւնները, տղայութիւնները **բոլորն ալ** / վերջացան (<Օ,197): Մոր ծիծաղն **իսկ**/ կը ցաւցնէր իր պրկուած ջիղերը (ՄՊ,387):

Մը անորոշ հողը ևս կարող է լինել վերաբերյալի ցուցիչ՝ հանդես գալով ենթակայի հետ:

Օրինակ՝ Յանկարծ **վարագոյր մը**/ գլորուեցաւ (ՄՊ,237): Իր ծայնին մէջէն **օտար մը** /խոսէր (ՄՊ,237): Հոգիին մէջ **դանակ մը** /խաղաց(ՄՊ,372):

Արևմտահայերենում սակավ դեպքերում հնարավոր է վերաբերյալը շեշտել *եմ* օժանդակ բայի միջոցով:

Օրինակ՝ **Պալիկ Հօրքուրն/ էր մեռեր** (<<ԼՄ,229): Բայց աչքերուն մէջ **արին/ էր իջեր** (<Օե,90): Վրաս ո՛չ **դող էր** մնացեր, ո՛չ **խեղդուք եւ ո՛չ յուզում, այլ նուրբ ու փափուկ տխրութիւն մը միայն** (ԼՇԵ,115):

Ենթական արևմտահայերենում շեշտվում է նաև հավելադրական շրջումով, «որի դեպքում տրամաբանական շեշտ կրող բառը լրացուցիչ ավելադիր հանգույցով հարադրվելով առանձնանում է, դառնում հաղորդման կենտրոն»⁶: Շեշտվող բառի մոտ ավելանում են լրացուցիչ *եմ* հանգույց և ստորադասական շաղկապ, նախադասությունը ստանում է բարդ ստորադասական նախադասության տեսք:

Օրինակ՝ **Ան է, որ** յամառօրէն կ'որոնէր Տիգրանին նայուածքը (ՄՊ,239): Ու **իրարանցում մըն է՝** կը յաջորդէ թոնրապան մէջ (<ՄԵ,31): **Ճամբան էր, որ** կ'առաջնորդէր զինքը (<ՄԵ,48):

Ենթական կարող է ընդգծվել կրկնության միջոցով:

Օրինակ՝ Կարծես **ոչինչ, ոչինչ** պատահած ըլլար (ՄՊ,402): **Ծառերը, ձիթենիի ծառերը** խենթեցեր էին ան տարին (<Օե,185):

Նախադաս ենթական ասույթի վերաբերյալն է նաև կրավորական կառույցի նախադասություններում. խոստով գործողության իրական օբյեկտը՝ ուղիղ խնդիրը, քերականորեն ներկայացնում է ենթակայի դերում՝ երկ-

⁶ Քոսյան Վ., նշվ. աշխ., էջ 45:

րորդական անդամի դերը փոխարինելով գլխավոր անդամի դերով, հատուկ կարևորություն տալով նրան և մղելով առաջին պլան⁷:

*Օրինակ՝ Միջոց մը Արեգեանը /կանչուեցաւ գիւղէն (ՀՄԵ,100): Սայլերը /լծուեցան (ՀՀԼՍ,51): Դուռին ետեւ աղմուկ մը/ լսուեցաւ (ՀՀԼՍ,75): Բոյները/ քանդուած էին (ՀՀԼՍ,164): **R +T շարադասություն՝ ստորոգյալ +ենթակա հաջորդականությամբ:***

Ստորոգյալ+ենթակա շարադասության վերաբերյալ Վ. Առաքելյանը գրում է. «Առհասարակ ենթակայի ետադաս դիրքը (ստորոգյալի համեմատությամբ) առաջ է բերում հանդիսավորություն, ուժեղացնում է խոսքի քնարականությունը, ընդգծում է գործողությունների, եղելությունների կարևորությունը»⁸: Նման շարադասությունը սուբյեկտիվ է, այսինքն՝ խոսողը մտքերը շարադրում է այնպես, որ անհայտից գնում է դեպի հայտնին: Քերականական տրոհումը համապատասխանում է առկայական տրոհմանը: Հաղորդակցական գծապատկերն է՝ **R+T**:

Օրինակ՝ Հեռացած էր /մահուան վրանգը(ՄՊ,484): Անտանելի էր /իր վիճակը (ՄՊ, 41): Արքայութեան անտաքեր հրեշտակն էր/ այդ ծերը (ԾԵ,327): Հո՛ղ է՛սխալը (ԼՇԵ, 383):

Նախադաս ստորոգյալը կարող է գործածվել իմաստը սաստկացնող, ընդգծող բառերի՝ վերաբերականների, մակբայների, դերանունների, շաղկապների հետ:

*Օրինակ՝ Հիմայ **անհունօրէն** բարձրացաւ գինը /այդ կեանքերուն (ՄՊ,321): **Սաստիկ** յուզուած էր/ Տիրան (ՄՊ,65): Գեղեցկադէմ երիտասարդ **մըն** էր **խկապէս** /գերմանացի սպան (ՄՊ,499): Մեծ մոռացում **մըն** է/ գինովութիւնը (ՄՊ,114):*

Նախադաս ստորոգյալը կարող է կրկնվել՝ տալով «խոսքին յուրահատուկ դիմ»⁹:

⁷ Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, հատոր I, Երևան, 1962, էջ 629: Abrahamyan A., Bay jamanakacic hayerenum, hator 1, Yerevan, 1962, ej 629:

⁸ Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հատոր I, Պարզ նախադասություն, Երևան, 1958, էջ 462: Araqueljan V., Hayereni sharahyusutyun, hator 1, Parz nakhadasutyun, Yereva, 1958, ej 462:

⁹ Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ս., Բաղիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Երևան, 1976, էջ 426: Abrahamyan S.G.,

Օրինակ՝ Ի'նք, ի'նք էր միայն/ զրկուածը(ՄՊ,392):

T+R շարադասություն՝ ստորոգյալ + ենթակա հաջորդականությամբ:

Սակայն միշտ չէ, որ հետադաս ենթական ասույթի ելակետն է. երբեմն հետադաս ենթական ինքն է կրում տրամաբանական շեշտը՝ դառնալով վերաբերյալ: Այս պարագայում, թեև նախադասության բաղադրիչների շարադասությունը շրջուն է, բայց հաղորդակցական շարադասությունը օբյեկտիվ է: Հաղորդակցական գծապատկերն է՝ **T+R**: Քերականական տրոհումը չի համընկնում առկայական տրոհմանը: Հետադաս ենթական շեշտվում է, երբ գործածվում է համադասական շաղկապների հետ¹⁰:

Օրինակ՝ Տեղի ունեցաւ /երկրորդ գործողութիւնը եւս (ՄՊ,486): Հօքորին հետ գոհ էին/ նաեւ հաւերը (<<ԼՍ,217): Տեղի ունեցաւ /երկրորդ գործողութիւնը եւս (ՄՊ,486):

Հետադաս ենթական վերաբերյալ է, երբ կա՛մ կրկնվում է, կա՛մ կիրառվում են բազմակի ենթականեր՝ իմաստի սաստկացման նրբերանգով:

Օրինակ՝ Բայց պարտահեր էր /շար մտախոգիչ բան մը, անդարմանելի, ցաւալի և անյոյս աղէտ մը(ՄՊ,484): Բայց կը մնար /իր մէծագոյն, անջնջելի ցաւը, մանչ չունենալու անդարմանելի ցաւը(ՄՊ, 481):

Հետադաս ենթական վերաբերյալ է, երբ կիրառվում է սաստկական բառերի հետ:

Օրինակ՝ Սպառած էր /նոյնիսկ իր ապահովագրութեան դրամը (<<ԼՍ,447): Այդպէս ստեղծուած են/բոլոր ազատ հայրենիքները (<<ԼՍ,632):

Այսպիսով, S+V կառույցներում, որոնք համապատասխանում են T+R հաղորդակցական գծապատկերին, վերաբերյալը հիմնականում քերականական ստորոգյալն է. այս դեպքում քերականական տրոհումն ու առկայական տրոհումը համընկնում են: Սակայն լեզվական փաստերը մեզ բերել են այն եզրահանգման, որ S+V կառույցներում հնարավոր է՝ վերաբերյալը լինի ենթական և ոչ թե ստորոգյալը՝ R+T հաղորդակցական գծապատկերով, որտեղ առկայական տրոհումը չի համընկնում քերականականին:

V+ S կառույցներում հիմնականում առկա է R+T առկայական տրոհումը, քանի որ հայերենում ստորոգյալը դրվում է նախադասության սկզբում՝ գոր-

Parnasyan N.A., Ohanyan H.S., Badikyan K.H.G., Jamanakacic hayoc lezu, h. 3, Sharahyusutyun, Yerevan, 1976, ej 426:

¹⁰ **Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, Երևան, 1976, էջ 131: Badikyan Kh., Jamanakacic Hayereni parz nakhadasutyun Sharadasutyuny, Yerevan, 1976, ej 131:

ծողությունը, հատկանիշը շեշտելու, խոսքին հանդիսավորություն տալու համար: Առկայական տրոհումը համընկնում է քերականականին: Սակայն V+ S կառույցներում ևս հնարավոր է T +R տրոհումը, որի դեպքում քերականական տրոհումը չի համընկնում առկայական տրոհմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, S+V կառույցներում, որոնք համապատասխանում են T+R հաղորդակցական գծապատկերին, վերաբերյալը հիմնականում քերականական ստորոգյալն է. այս դեպքում քերականական տրոհումն ու առկայական տրոհումը համընկնում են: Սակայն լեզվական փաստերը մեզ բերել են այն եզրահանգման, որ S+V կառույցներում հնարավոր է՝ վերաբերյալը լինի ենթական և ոչ թե ստորոգյալը՝ R+T հաղորդակցական գծապատկերով, որտեղ առկայական տրոհումը չի համընկնում քերականականին:

V+ S կառույցներում հիմնականում առկա է R+T առկայական տրոհումը, քանի որ հայերենում ստորոգյալը դրվում է նախադասության սկզբում՝ գործողությունը, հատկանիշը շեշտելու, խոսքին հանդիսավորություն տալու համար: Առկայական տրոհումը համընկնում է քերականականին: Սակայն V+ S կառույցներում ևս հնարավոր է T +R տրոհումը, որի դեպքում քերականական տրոհումը չի համընկնում առկայական տրոհմանը:

Բանալի բառեր - արևմտահայերեն, առկայական տրոհում, ենթահիմք, վերաբերյալ, տրամաբանական շեշտ, ենթակա, ստորոգյալ, հնչերանգ, նախադաս շարադասություն, հետադաս շարադասություն:

ПОРЯДОК ПОДЛЕЖАЩЕГО И СКАЗУЕМОГО В ЗАПАДНОАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЭРМИНЕ АБРОЯН

Таким образом, в структурах S+V, соответствующих коммуникативным графическим изображениям T+R, рема в основном является грамматическим сказуемым: в этом случае грамматическое членение и актуальное членение совпадают. Однако языковые факты приводят нас к тому заключению, что возможно, чтобы в структурах S+V ремой становилось подлежащее, а не сказуемое с коммуникативным графическим изображением R+T, в котором актуальное членение не совпадает с грамматическим.

В структурах V+S в основном существует актуальное членение R+T, поскольку в армянском языке сказуемое ставится в начале предложения для выделения действия, признака, придания речи торжественности. Актуальное членение совпадает с грамматическим. Однако в структурах V+S также возможно членение T+R, при котором грамматическое членение не совпадает с актуальным членением.

Ключевые слова – западноармянский язык, актуальное членение, тема, рема, логическое ударение, подлежащее, сказуемое, интонация, препозитивный порядок слов, постпозитивный порядок слов.

THE SYNTAX OF SUBJECT AND PREDICATE IN WEST-ARMENIAN

HERMINE ABROYAN

The syntax of subjects and predicates in the West Armenian language – (S+V structures), which correspond to communicative graphic image T+R, the concerned is mainly a grammatical predicate: in this case the grammatical and functional analyses of the sentence coincide. However, linguistic facts lead to the conclusion that in S+V structures it is also possible to have the subject and not the predicate as the concerned, which means that in the communicative graphic image R+T the functional analysis of the sentence doesn't coincide with the grammatical.

R+T functional analysis of sentences exists mainly in V+S structures because in the Armenian language the predicate is positioned at the beginning of a sentence to underline the action, attributing to make the speech more formal, in this case the functional analysis of a sentence coincides with the grammatical. However, T+ R analysis is also possible in V+S structures in which case the grammatical analysis of the sentence doesn't coincide with the functional.

Key words - western Armenian, functional analysis of a sentence, topic, comment, logical accent, subject, predicate, pronunciation , prepositive word order, postpositive word order.

Համառոտագրություններ

ԳՋԵ - Գրիգոր Զոհրապ, Երկեր, Երևան, 1989:

ԼՇԵ - Լևոն Շանթ, Երկեր, Երևան, 1968:

ԾԵ - Ծերենց, Երկեր, 1983:

ՀՀԼՍ - Համաստեղ, Հայաստանի լեռներու սրնգահարը, Երևան, 1989:

ՀՊԵ - Հակոբ Պարոնյան, Երկեր, Երևան, 1969:

ՀՕԵ - Հակոբ Օշական, Երկեր, Երևան, 1979:

ՀՄԵ - Հակոբ Մնձուրի, Երկեր, Երևան, 1986:

ՇՇՆԱԵ - Շահան Շահնուր, Նահանջը առանց երգի, Երևան, 1994:

ՍՊ - Սփյուռքահայ պատմվածք, Երևան, 1989: